



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում»` ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրի շրջանակներում բնապահպանական և կանաչ ձեռներեցությանն ուղղված դասընթացների վերաբերյալ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում»ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը ուղղված ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը և ապահովել դրա շարունակելիությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում:

Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից` ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

Ծրագիրն իրականացնող տեղական գործընկերներն են «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» (ISSD), «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության և «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» (ESAC) հասարակական կազմակերպությունները:

Բնության պահպանության, գետերի ափամերձ տարածքների վերականգնման աշխատանքների շարունակելիության ապահովման և «կանաչ» ձեռներեցության տարածման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվելու է «կանաչ» դասընթացների շարք: Մանրամասները ներկայացված են ստորև:

Դասընթացի տևողությունը` 5 (հինգ) օր, ընդհանուր 20 (քսան) ժամ (յուրաքանչյուր օր` միջինում 4(չորս) ժամ)

- Դասընթացների վայրը` ք. Գավառ և ք.Մարտունի
- Դասընթացների մեկնարկը` հունվար-փետրվար, 2022

Դասընթացի թեմաները`

- Օր 1.**Թափոնները որպես եկամտի նոր աղբյուր
- Օր 2.**Բնությունն ու ես
- Օր 3.**Գործնական դաս` թափոնի նոր, ստեղծարար կյանքը
- Օր 4.**Կանաչ ձեռներեցություն` շուկայահանում և վաճառք
- Օր 5.** Այցելություն վերամշակման գործարան

Վկայական ստանալու համար անհրաժեշտ է մասնակցել բոլոր դասընթացներին: Առավել ակտիվ մասնակիցները հնարավորություն կստանան մասնակցել ցուցադրությունների և այլ միջոցառումների, որի ընթացքում կարող են լրացուցիչ եկամուտ ստանալ` վաճառելով դասընթացների ընթացքում պատրաստված ձեռագործ աշխատանքները:

Դասընթացների ընթացքում լինում է սուրճի ընդմիջում:

Դասընթացին գրանցվելու համար անհրաժեշտ էլիմել Բլեջան ՀԿ`

Լիաննա Ասոյանին 077764641

